

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆՆ ԱՅՅԵԼԵՑ ՇՈՐԺԱՅՈՒՄ ՀԱՆԳՍՏԻ ԵԿԱԾ ԱՐՑԱԽՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ

06.08.2012

Օգոստոսի 4-ին Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանն այցելեց Շորժայի 'Նկարիչների տուն' պանսիոնատում հանգստացող արցախցի դպրոցականներին: Արդեն ավանդական դարձած միջոցառումը կազմակերպվել է Գեղարքունիքի մարզ-ԼՂՀ Մարտունու շրջան առեստրատնտեսական եւ կրթամշակութային համագործակցության հուշագրի շրջանակներում, որը երկու կողմերի միջեւ կնքվել է 2009 թվականի նոյեմբերին, ԼՂՀ Մարտունի քաղաքում: Ինչպես տեղեկացրեց Շորժայի գյուղապետ Սուվիկո Շուշանյանը՝ սա արդեն երրորդ տարվա ամառն է, ինչ Շորժան ընդունում է արցախցի երեխաներին, եւ տեղի ու արցախցի դպրոցականների շրջանում արդեն ձեւավորվել է մտերմություն ու բարեկամություն: Արցախի դպրոցականների պատվիրակության ղեկավար, Մարտունի քաղաքի թիվ երկու միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ Միհրան Զիվանյանի տեղեկացմամբ՝ Շորժայում հանգստի եկած տասնվեց երեխաներն ընտրվել են Մարտունու շրջանի վարչակազմի կրթության բաժնի կողմից, ուր հիմնական նախապատվությունը տրվել է շրջանի դպրոցների՝ ուսման մեջ առավել աչքի ընկած աշակերտներին՝ առարկայական օլիմպիադաների եզրափակիչ փուլում հաղթածներին, ավարտական եւ միասնական քննությունների ժամանակ առավել բարձր միավորներ հավաքածներին, մարզական մրցումներում հաղթանակած պատանիներին եւ զոհված ազատատամարտիկների երեխաներին: Միհրան Զիվանյանը հավելեց նաեւ, որ անցած հինգ օրերի ընթացքում Շորժայի դպրոցականների հետ կազմակերպվել են մարզական մրցումներ, ասմունքի երեկոներ, ինտելեկտուալ խաղեր, երեխաների հանգիստն անցնում է հետաքրքիր ու բովանդակալից: Ողջունելով արցախցի դպրոցականներին՝ մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը սրտաբաց զրույցի բռնվեց նրանց հետ, շեշտելով, որ Գեղարքունիք-ԼՂՀ Մարտունու շրջան շփումները, բարեկամական փոխադարձ այցերը պետք է ծավալվեն ու ընդարձակեն իրենց շրջանակները: Մարզպետը խոստացավ արցախցի դպրոցականներին՝ հաջորդ ուսումնական տարում բուհեր ընդունված աշակերտներին Շորժայում հանգստանալու հրավիրել ընտրված կազմի ցուցակից դուրս: Հանդիպման ավարտից հետո Գեղարքունիքի մարզպետարանի հովանավորությամբ արցախցի դպրոցականները էքսկուրսիայի մեկնեցին Էջմիածին եւ Երեւան: Վաղը նրանք կայցելեն Սեւանի թերակղզի եւ մարզի այլ տեսարժան վայրեր: Արցախցի դպրոցականները Շորժայից կմեկնեն օգոստոսի ութին: